ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածը, կից ներկայացնում եմ «Հայաստան» խմբակցության որոշումը՝ խմբակցության կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» (Կոդ՝ Խ-1007-13.02.2025-ՏՀ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Հիմնական զեկուցող՝ ԱԺ պատգամավոր Թադևոս Ավետիսյան) առաջնահերթ նախագիծ համարելու մասին՝ այն սահմանված կարգով Ազգային ժողովի նստաշրջանի և 2025թ. ապրիլի 15-ին գումարվող հերթական նիստերի օրակարգերում ներառելու և քննարկում կազմակերպելու նպատակով:

Առդիր 1էջ:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՕՀԱՆՅԱՆ

09.04.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 38-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետը և 75-րդ հոդվածը, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը,

Կարևորելով ««Հայաստան» խմբակցության կողմից առաջադրած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» (Կոդ՝ Խ-1007-13.02.2025-ՏՀ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվող կարգավորումը,

Նկատի առնելով նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի՝ Ազգային ժողովի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի 09.04.2025թ. նիստում տրված բացասական եզրակացությունը,

Անհրաժեշտ համարելով նախագծի քննարկումն Ազգային ժողովի նիստում.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Առաջնահերթ համարել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» (Կոդ՝ Խ-1007-13.02.2025-ՏՀ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Հիմնական զեկուցող՝ ԱԺ պատգամավոր Թադևոս Ավետիսյան)
2. Առաջարկել Ազգային ժողովի նախագահին այն ընդգրկել Ազգային ժողովի նստաշրջանի և 2025թ. ապրիլի 15-ին գումարվող հերթական նիստերի օրակարգում:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՕՀԱՆՅԱՆ

09.04.2025թ.